

«Արմենիա» կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/1

31 մայիսի 2012թ.

Քննարկվեց «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ դիմում-գանգատը «Ա. ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 01.03.2012թ. թիվ 1000203 ստուգման ակտի դեմ»:

Համաձայն «Ա. ՊԵԿ նախագահի 24.05.2011թ. թիվ 1000203 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Արդյունքում 01.03.2012թ-ին կազմվել է թիվ 1000203 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 61.787.476 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ա. ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 08.05.2012թ-ի նիստում «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ կողմից ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Նշվեց նաև, որ համաձայն «Ա. ՊԵԿ նախագահի 16.05.2012թ. թիվ 12 որոշման սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու «Օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով»:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ:

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի մոտ նշանակվել է վերստուգում՝ «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի կողմից «Ա. ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 2012 թվականի մարտի 1-ի թիվ 1000203՝ ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատի քննարկումը հետաձգել մինչև վերստուգման ավարտը»:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն, անորոշ ժամկետով ընդունված վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով:

Իր հերթին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե. «ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Այսպիսով հաշվի առնելով, որ համաձայն «Ա. ՊԵԿ նախագահի 25.05.2012թ. թիվ 1000203/1 հանձնարարագրի «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ում նշանակվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում, որի արդյունքում պետք է ընդունվի նոր վարչական ակտ, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի և 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության դրույթներով, ընկերության գանգատի հիման վրա


ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ձ Ո Մ Է՝

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթներով՝ «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ ղինում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ՔԱՐՍԵՂՅԱՆ